Արձանագրության 3

ԵՔ-ԳՀԾՁԲ-19/156 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

23.08.2019թ.
Ժամը՝ 12:20

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կիրակոսյան/ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Սարգսյան /գնահատող/, Ա. Հովհաննիսյան /գնահատող/
Ա. Հարությունյան /բացող/
Բացակայում էր Կ. Հարությունյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Կիրակոսյան

1. Պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի մասին

(Ա. Կիրակոսյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն համաձայն որի մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց հարկային պարտավորություն և մասնակցի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերի պահանջներին:

1.2 Ծանուցվել էր 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4 դեմ - 0:

2. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Կիրակոսյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4 դեմ - 0:

3. ԵՔ-ԳՀԾՁԲ-19/156 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Կիրակոսյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/156» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ -ին և ներկայացնել **Դավթաշեն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի**

հարթ տանիքների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու առաջարկ,

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Կիրակոսյան

Անդամներ՝ ---------- Ա. Սարգսյան

---------- Ա. Հովհաննիսյան

---------- Ա. Հարությունյան

Քարտուղար՝ ---------- Ն. Կիրակոսյան